ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1960 Общественные науки

Բ. Ն. Առաքելյան

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Հայ ժողովրդի պատմության հին շրջանը ընդգրկում է 4-րդ դ. վերջերից մ. թ. ա., մինչև մ. թ. 3-րդ դարը ներառյալ: Դա վերին աստիճանի կարևոր մի դարաշրջան է, երբ ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը, առաջանում և նշանակալից տնտեսական, քաղաքական, կուլտուրական զարգացման է հասնում հայկական պետականությունը: Այդ դարաշրջանում զարգանում է հողագործությունը, մանավանդ ընդարձակվում է ոռոգելի երկրագործությունը, աճում անասնապահությունը, զարգանում են արհեստագործությունը և առևտուրը: Երկրի արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ տեղի է ունենում աշխատանքի հասարակական երկրորդ մեծ բաժանումը՝ արհեստը անջատվելով երկրագործությունից՝ կենտրոնանում է քաղաքներում: Առաջանում և նկատելիորեն առաջադիմում են հին Հայաստանի քաղաքները:

Դաջ հայտնի է, որ քաղաքներ Հայկական բարձրավանդակում կային դեռևս ուրարտական ժամանակներում, սակայն նրանք ամայացան ուրարտական թագավորության անկումով և վերացան:

Հին Հայաստանի քաղաքների առաջացումը հետևանք էր երկրի նոր առաջընթաց զարգացման: Առաջին հին Հայկական քաղաքները առաջացան այդ ժամանակ երևան եկած հայկական առանձին պետական կազմավորումների մեջ: Այրարատյան թագավորության կենտրոն Արմավիրը առևտրական ճանապարհներով կապված էր Ատրպատականի, Վրաստանի և Սև ծովի նավահանգիստների հետ և նշանակալից քաղաքական կենտրոն էր դեռևս 4-րդ դ. վերջերում և 3-րդ դ. մ. թ. ա.: Ծոփքում, որի միջով անցնում էր Աքեմենյանների արքայական ճանապարհի մի հատվածը, առաջացել էին Արշամաշատ, Արկաթիակերտ քաղաքները, Փոքր Հայքում՝ Կամախը, Մեծ Հայքում՝ Զարեհավանը, նույնանուն մի այլ քաղաք ևս, Զարիշատը և այլ քաղաքներ: Քաղաքաշինությունը մեծ զարկ ստացավ հայկական հողերի միավորումով մեկ միասնական պետության մեջ՝ Արտաշես Ա-ի, մանավանդ Տիգրան Բ-ի ժամանակներում: Հիմնադրվեցին այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպես Արտաշատը, Երվանդաշատը, Տիգրանակերտը: Հին Հայաստանի քաղաքներից հայտնի են նաև Վանը, Նախճավանը, Վարդգեսավան-Վաղարշապատը, Մծուրնը, Տիգրանակերտ և այլ անուններ կրող մի քանի մանր քաղաքներ:

Հին Հայաստանում երկու տասնյակից ավելի քաղաք կար: Երկրի միջով անցնում էին հյուսիսային և հարավային առևտրական մայրուղիները, որոնց վրա գտնվում էին ոչ միայն քաղաքները, այլև զգալի թվով կայաններ, հանգրվաններ, որոնց մի մասը նույնպես առևտրական նշանակություն ուներ:

Հին Հայաստանի քաղաքները շատ բանով նմանվում էին հելլենիստական պոլիսներին, նրանք կառուցվում էին թագավորի կողմից և շրջապատված էին լինում իրենց պատկանող ագարակներով ու դաստակերտերով, որտեղ գտնվում էին ավագանու կալվածները և ազատ քաղաքացիների հողակտորները: Քաղաքներում էր հիմնականում կենտրոնացած արհեստագործությունը

և առևտուրը։ Քաղաքային բնակչությունն ուներ խառը էթնիկ կազմ, այնտեղ բացի հայերից ապրում և առևտրով ու արհեստներով զբաղվում էին հրեաներ, հույներ, ասորիներ, կապպադովկացիաները և հարևան հելլենիստական երկրների այլ բնակիչներ։ Հայտնի է, որ Տիգրան Բ-ը շարժվելով դեպի արևմուտք, հելլենիստական 12 քաղաքների շուրջ 300 հազար բնակիչներին հարկադրաբար վերաբնակեցրեց Հայաստանի քաղաքներում, մասնավորապես իր հիմնադրած հռչակավոր Տիգրանակերտ քաղաքում[1]։ Առաջացել էր և քաղաքային ինքնավարությունը, ինչպես հելլենիստական քաղաքներում։

Հայտնի է, որ Հայաստանը ընկած լինելով նվաճողական հզոր Հռոմի և պարթևական, ապա սասանյան տերությունների միջև, այնուամենայնիվ կարողանում էր պահպանել իր, եթե ոչ կատարյալ անկախությունը, ապա գոնե ինքնուրույնությունը։ Ինչով կարելի է բացատրել այդ սոսկ ժողովուրդի ազատասիրությամբ կամ մարտական ոգու առկայությամբ։ Պարզ է, որ դա անհիմն կլիներ։ Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էին տնտեսական ու քաղաքական զարգացման որոշ մակարդակ, զորք ու զենք, տնտեսական ու ռազմական կարողություն՝ որպեսզի կարելի լիներ դարեր շարունակ դիմակայել երկիրը գավթել ձգտող հզոր թշնամիներին։

Հայաստանը դեռևս 4-րդ դարի վերջերից մ. թ. ա. շփվում է հելլենիստական աշխարհի հետ և ժամանակի ընթացքում այդ կապերը ավելի ու ավելի սերտ են դառնում։ Սելևկյան թագավորության առաջացումից հետո, մինչև 189 թ., Հայաստանի մեծ մասը մտնում էր այդ թագավորության մեջ։ Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը սերտ կապեր պահպանեց ոչ միայն Սելևկյան, այլ Պարթևական թագավորությունների և Փոքր Ասիայի հելլենիստական մյուս երկրների հետ։

Տիգրան Բ-ի ժամանակ նրա թագավորության սահմաններում գտնվում էին Փոքր Ասիայի մի մասը, Հյուսիսային Միջագետքը, Կիլիկիան, Ասորիքը՝ Սելևկիանների Անտիոք մայրաքաղաքով հանդերձ։

Հետագայում ևս Հայաստանը սերտ կապեր ուներ հարևան երկրների՝ Կովկասի, Իրանի, Միջագետքի և արևմուտքից հարևան հելլենիստական երկրների, իսկ մի փոքր ավելի ուշ Հռոմին ենթակա արևելյան երկրների հետ։

Երկրի հասարակական-տնտեսական և քաղաքական զարգացման մակարդակը և նրա պատմական միջավայրը կանխորոշում էին Հին Հայաստանի մշակույթի ինչպես մակարդակը, նույնպես և բնույթը։ Այդ մշակույթը զարգանում էր հին արևելյան ակունքներ ունեցող Հայկական հնամենի մշակույթի արմատների և նոր առաջացած ստրկատիրական հարաբերությունների հիման վրա, ընդունելով դրանց համապատասխան կենսարանք և իր ձևով ու բովանդակությամբ հարստանում էր հելլենիստական Արևելքի երկրների հետ ունեցած տնտեսական քաղաքական և մշակութային բավականաչափ ընդարձակ կապերի ու շփումների շնորհիվ։

Հին Հայաստանի մշակույթի մեջ որոշակիորեն երևան են գալիս երկու ուղղություն՝ հնամենի ժողովրդականը և նոր առաջացած հելլենիստականը։

Հին արևելյան արմատներ ունեցող և ավանդական բնույթ ստացած ժողովրդական ուղղության զարգացումը հարատևում և անընդհատ վեր ելնող գծով շարունակվում է և հետագայում։ Այդ ուղղությունը երևան է գալիս հա-

[1] Strabo, XI, 14, 15, XII, 2, 9.

սարակական կյանքի, կենցաղի, նյութական մշակույթի, արվեստի և աշխարհայացքի տարբեր բնագավառներում։ Այն դրսևորվում է ճարտարապետական ավանդական ձևերի մեջ, քարից, կավից, փայտից և մետաղներից պատրաստված կուռքերի, անոթների և կենցաղային առարկաների մեջ, զգեստների և արդ ու զարդի մեջ, ժողովրդական տոների, հանդեսների, թագման և այլ ծեսերի մեջ, հայկական հարուստ առասպելաբանության մեջ, որի գոհարներից են Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորք Անգեղի և Աժդահակի, Վահագնի և Աստղիկի, Արտաշեսի և Արտավազդի վերաբերյալ զրույցները։ Հին Հայկական ժողովրդական մշակութային ուղղությանն են վերաբերում նաև 360 թ. տոմարը և հին տոմարական հասկացողությունները, երկնային մարմինների վերաբերյալ եղած հնամենի պատկերացումները, պաշտամունքային և առաջին հերթին բնապաշտական ըմբռնումները, վերջապես մեհենական նշանները և արամեական գրերի օգտագործումը և այլն։

Երկրորդ ուղղությունը հին Հայկական մշակույթի մեջ՝ հելլենիստականը առաջանում է դեռևս 3-րդ դ. մ. թ. ա. և շարունակելով զարգանալ, հարատևում է մինչև 3-րդ դ. մեր թվ.։

Մինչև վերջին տասնամյակը այդ մշակույթի մասին մենք քիչ բան գիտեինք, այն էլ առավելապես հին հունական, լատինական և հայկական գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկություններին շնորհիվ։ Հայտնի է, որ դեռևս 3-րդ դ. մ.թ. ա. Ծոփքում կտրվել են առաջին հայկական դրամները, որոնք ունեցել են հունական մակագրություններ։ Նույն 3-րդ դ. մ. թ. ա. սկսվում է հունարեն գրերի օգտագործումը հայ ավագանու շրջաններում։ Հայոց թագավորները, սկսած 2-րդ դ. մ. թ. ա. թողել են մի շարք հունարեն արձանագրություններ։ Միավորված հայկական թագավորության գահակալները՝ Արտաշեսը, մանավանդ Տիգրան Բ և Արտավազդը հովանավորում էին հելլենիստական մշակույթը, որի գարգացմանը, ինչպես իրավացի նկատել է Հ. Մանանդյանը, մեծապես նպաստեց Տիգրանակերտ քաղաքի հիմնադրումը[2]։ Պատահական է արդյոք, որ Տիգրանակերտում ապաստան գտավ Աթենքից վտարված հռչակավոր հռետոր Ամֆիկրատը[3], որ Տիգրանի արքունիքում ապրում էր նշանավոր փիլիսոփա և գրող Մետրոդոր Ակեպսացին[4], որը գրել է Տիգրանի մանրամասն պատմությունը, թեև դա մեզ չի հասել։ 53 թ. Արտաշատի հելլենիստական թատրոնում Արտավազդ Բ բեմադրեց հույն հռչակավոր ողբերգակ Եվրիպիդեսի «Բաքոսուհիները», հույն դերասանների, դրանց թվում և Ցասոնի մասնակցությամբ[5]։ Հելլենիստական թատրոն կար և Տիգրանակերտում։ Արտավազդը Բ ինքը գրել է ողբերգություններ, պատմական գործեր և ճառեր՝ հունարեն լեզվով[6]։ Տիգրան Բ. և նրա հետնորդները հատել են դրամներ՝ իրենց դիմանկարներով, ավանդական թագերով, բայց հունարեն մակագրություններով ու քառածի կառքով։ Միստ ուշագրավ է այն հանգամանքը, որ հայկական աստվածների պանթեոնը կերպարանափոխվեց, համադրվելով հունական պանթեոնի հետ։ Այդ կապակցու-

[2] Հ. Մանանդյան Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 67։

[3] Plut. Lucull, 22, 7.

[4] Նույն տեղում 22, 7։

[5] Георг Гоян, 2000 лет армянского театра, т. I, Москва, 1952, գլուխ առաջին և երկրորդ։

[6] Plut. Crassus, XXXIII.

թյամբ հելլենիստական երկրներից բերվեցին և հայկական մեհյաններում դրվեցին աստվածների արձաններ[7]։

Հայկական միջավայրում հայտնի էին, նույնիսկ հարգի էին հունական առասպելներ[8]։ Հայաստանում կառուցվել են հունա-հռոմեական ոճի շենքեր, որոնցից լայնորեն հայտնի է Գառնիի հեթանոսական հոյակապ տաճարը։

Վերևում նշված փաստերը վկայում են հին Հայաստանի մշակույթի նկատելիորեն բարձր մակարդակի և բազմակողմանիության մասին։ Սակայն հին Հայաստանի նյութական մշակույթը դեռևս վատ է ուսումնասիրված։ Տարօրինակ չէ, որ տաս տարի առաջ Մոսկվայում մեր առաջադրած թեզը այն մասին, թէ Հայաստանը եղել է հելլենիստական մշակույթի օջախներից մեկը, հանդիպեց մի շարք գիտնականների թերահավատությանը։

Այս պայմաններում առանձին նշանակություն են ստանում հին հայկական Վաղարշապատ քաղաքի պեղումները, որոնք սահմանափակ ծավալով կատարվեցին 1928—1931 թ. թ.[9], և մանավանդ Գառնիի ամրոցի պեղումները, որոնք սկսվեցին 1949 թ. և կշարունակվեն առաջիկա տարիներին։

Վաղարշապատում բացվել են մի քանի տասնյակ դամբարաններ քաղաքի հին գերեզմանոցում։ Դամբարաններում հայտնաբերվել են 2-րդ—4-րդ դարերի խեցեղեն և ապակյա անոթներ, զանազան զարդեր։ Մի քանի դամբարանում եղել են նաև կավե թրծած սարկոֆագներ, խնոցու կամ կոշիկի ձևի։

1958 թ. Վաղարշապատում Հռիփսիմե տաճարի վերանորոգման ժամանակ հիմքերի տակ՝ ներսից ճարտարապետ Ա. Սահինյանը հայտնաբերեց Գառնիի հեթանոսական տաճարի քանդակներին հար և նման քանդակներ կրող երեք քար, բայց ոչ թեթև բազալտից, այլ տուֆից, որոնք վերցված են Վաղարշապատում եղած հեթանոսական ժամանակների ինչ որ շենքից և շրջված վիճակում դրվել են քրիստոնեական տաճարի հիմքերում։

Հին Հայաստանի նյութական մշակույթը ուսումնասիրելու տեսակետից հատուկ նշանակություն ունեցան Գառնիի սիստեմատիկ պեղումները։ Դրանցով փաստորեն սկսվեց այդ մշակույթի ծավալուն հայտնաբերումը և ուսումնասիրությունը։

Գառնիում բացվել են ամրոցի պարիսպը՝ իր 14 հզոր աշտարակներով, դղյակային պալատական շենքերի մնացորդներ (տե՛ս նկ. 1), դրանց ճարտարապետական հարդարանքների, ինչպես և արձանների ու հարթաքանդակների մարմարե բեկորներ։ Պեղվել է նաև 80-ից ավելի դամբարան 1—3-րդ դարերի։ Ամրոցում, մանավանդ դամբարաններում գտնվել են հարուստ և բազմակողմանի հնագիտական նյութեր՝ մետաղե գործիքներ, զենքեր, կավե և ապակե անոթներ, կենցաղային առարկաներ, զարդեր և այլն[10]։

[7] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 89—90։

[8] Նույն տեղում, էջ 122—123։

[9] Պրոֆ. Աշխարհբեկ Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։

[10] Б. Н. Аракелян, Гарни I, Результаты работ археологической экспедиции Института истории АН Арм ССР 1949—1950 гг. Ереван 1951: Նույնի Гарни II. Результаты работ Гарнийской археологической экспедиции 1951—1955 г. (античный период) Ереван 1957. Նույնի Значение раскопок в Гарни для изучения культуры древней Армении, ВДИ № 3 1953· Նույնի Мозаика из Гарни. ВДИ № 1, 1956.

Г. А. Тирацян, Материальная культура Армении первых веков н. э. по данным некрополя и бани в Гарни (автореферат) Ленинград 1956.

Գառնիի ոնտիկ ժամանակաշրջանի հուշարձանների ուսումնասիրությունը՝ նույն ժամանակաշրջանի այստեղից-այնտեղից վաղորոք հայտնի նյութերի համադրությամբ հնարավոր է դարձնում ավելի ճիշտ դաղափար կազմելու հին հայկական մշակույթի, նրա զարդացման մակարդակի ու բնույթի մասին և ավելի հստակ պատկերացնելու վերևում նշված երկու ուղղությունները նրա մեջ։ Համառոտակի նշենք այդ ըստ մշակույթի տարբեր բնագավառները։

Նկ. 1. Գառնիի ամրոցի հատակագիծը պեղումներից հետո։

Ճարտարապետություն։ Հին հայկական ժողովրդական ուղղությունը ճարտարապետության մեջ ներկայացնում է այսպես կոչված կիկլոպյան շարվածքի գործադրությամբ՝ անտաշ կամ ճեղքված քարից ամրոցներ, հասարակական և բնակելի շենքեր կառուցելիս։ Նման կառուցվածքների մնացորդներ կարելի է դիտել հին Արմավիրում, Երվանդաշատում, Փարաքարի մոտ հայտնի դարձած պաշտամունքային շինության մեջ և այլուր։ Հեթանոսական տաճարների հիմնական տիպը եղել է քառանկյունի երկարուկ միանավ շենքը, դոհասեղանի տեղադրությամբ նրա արևմտյան ծայրում[11]։ Հնից են դալիս նաև բոլորակ աշտարակաձև պաշտամունքային շենքերը, որոնց մնացորդները գտնում ենք Փարաքարում և Աղափնատնում։ Բնակելի շենքերը եղել են քառանկյունի, բոլորակ, փայտյա հարթ կամ քարերից, հնարավոր է նաև փայտյա դերաններից կազմված թաղակապ, հաճախ էլ կենտրոնական երդիկավոր ծածկով։ Երվանդաշատում մենք տեսել ենք քառանկյունի շենքերի մնացորդներ, որոնց անկյունները ունեն ուղղանկյուն աշտարակաձև հավելվածներ։

[11] Ա. Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1957, էջ 231։

Հելլենիստական ճարտարապետական ուղղությունը առայժմ մեզ հայտնի է գերազանցապես Դառնիի ճարտարապետական կոմպլեքսով։

Դառնի ամրոցի պարիսպը բացելու ժամանակ հայտնաբերվել են շինարարական երկու շրջանի՝ սկզբնական շարվածքի (3-րդ դ. մ. թ. ա.) և Տրդատ 1-ի կառուցած պատի (1-ին դ. մ. թ.) մնացորդները։ Երկու դեպքերում էլ պատը կառուցվել է բազալտե լավ տաշած քարերից (նկ. 2), որոնք իրար հետ ամրացված են երկաթե գամերով, իսկ որոնց ծայրերը, որոնք մտնելով քարերի վրա փորված բների մեջ, լցված են արճճի ձուլվածքով։ Նախնական շարվածքը տարբերվում է 1-ին դարի շարվածքից քարերի ավելի խնամքով, համարյա ողորկ տաշվածքով և միջին տեղ է գրավում 1-ին դարի և ուրարտական նույնատիպ, բայց շատ ավելի խնամքով մշակված քարերով շարվածքների միջև։ Բայց Դառնիի պարսպի սկզբնական շարվածքը ավելի կապվում է հելլենիստական շրջանի անշաղախ շարվածքի, քան ուրարտականի հետ։



Նկ. 2. Դառնի ամրոցի արևելյան պարսպի մի հատվածը։

Դառնի ամրոցի պատը տեղադրված է ոչ թե ուղիղ գծով կամ աղեղնաձև, որին չէր խանգարի տեղանքը, այլ բեկ-բեկ գծերով և բաժանվում է հինգ տոանձին պաշտպանական հատվածների։ Այդ հանգամանքը հնարավորություն էր ընձեռում ամրոցի պաշտպաններին ըստ անհրաժեշտության իրենց հիմնական ուժերը կենտրոնացնել այս կամ այն պաշտպանական հատվածում, նայած թե որտեղ էր վտանգը ավելի սպառնալից դառնում։

Դառնի արքայական ամրոցի պարիսպը, որը վեր է խոյանում Ազատ գետի խորը ձորի գլխին և շարված է մի քանի տոննա կշռող, լավ մշակված բազալտյա քարերով, իր կառուցողական տեխնիկայով, պատի թանձրությամբ

(2,075), հզոր աշտարակների վերին աստիճանի խիտ (9—13 մ) դասավորությամբ, հմտորեն առանձին պաշտպանական հատվածների բաժանվածությամբ՝ հանդիսանում է հին Հայաստանի ոաղմական ամրոցաշինության մի երևելի ու կատարյալ հուշարձան։

Հելլենիստական ճարտարապետության նշանավոր հուշարձան է Գառնիի հեթանոսական տաճարը։ Բարձր հարթակի վրա կանգնեցված և չորս կողմերից հոնիական օրգերի սյուներով (6×8) շրջապատված այդ հոյակապ շենքը կառուցված է բազալտե սրբատաշ քարերով։ Տաճարի քիվերը, սյուների խոյակները, խոյակից-խոյակ ձգվող և քիվը իրենց վրա կրող արխիտրավային քարերը, տաճարը շրջանցող գոտին, դռան բացվածքը, և սյունաշարի ծածկը (պլաֆոն) շքեղորեն զարդարված են բարձրարվեստ քանդակներով[12]։ (նկ. 4)։ Բնորոշ է, որ հունա-հռոմեական ոճի այս տաճարը ավելի հելլենիստական է, քան հռոմեական։

Գառնիի հեթանոսական տաճարը մտնում էր ամրոցի պալատական կոմպլեքսի մեջ, որից պեղումների հետևանքով բացվել է ևս երեք շենք։ Դրանցից առաջինը քառանկյունի երկարուկ սրահ է 9,7 մ լայնքի (մաքուր չափը, առանց պատերի), որի կենտրոնական անցքով անցել է սյունաշար։ Տեղում պահպանվում են սյունների խարիսխների տակի երկու սալաքարերը։ Սրահի երկայնքը դեռևս որոշված չէ, որովհետև նրա պեղումները ավարտված չեն և շենքի հարավ-արևելյան ծայրը գտնվում է հեթանոսական տաճարի ընկած բեկորների տակ։ Սրահը տեղադրված է հեթանոսական տաճարի կողքին՝ նրանից քիչ դեպի արևմուտք. 7-րդ դ. տաճարի և նրա միջև կառուցվել է քառախորան գմբեթավոր եկեղեցի, որի հիմքերը կտրում անցնում են դահլիճի սրահը, նրա հարավ-արևելյան անկյան մոտ։ Այսպիսով պարզվում է, որ այդ շենքը 7-րդ դարում՝ եկեղեցին կառուցելու ժամանակ, արդեն ավերված էր։

Նկարագրված շենքի կողքին, նրանից դեպի հյուսիս, 1956—1959 թ. բացվել են երկհարկանի պալատական շենքի փլատակները։ Վերին հարկից ոչինչ չի մնում, իսկ ներքնահարկի մի մասը լավ է պահպանված, մյուսը՝ վատ, տեղ-տեղ նույնիսկ հիմքերի հետքերը չեն մնում։ Այնուամենայնիվ շենքի հատակագիծն ընթերցվում է։ Պալատական այս կառուցվածքը կենտրոնական առանցքով անցնող մի պատով բաժանվում է երկու թևի՝ արևելյան և արևմտյան, յուրաքանչյուր թևում ունենալով հնգական սենյակ։

Ներքնահարկում զետեղված են եղել տնտեսական նշանակություն ունեցող բաժանմունքներ, դրանց թվում խաղող ճզմելու հնձան, մառան և մի սենյակում ջուր պահելու հոր՝ փորված հատակի տակ։

Շենքը կառուցված է ճեղքված քարից՝ կրաշաղախով, բայց առավել կարևոր մասերում, օրինակ անկյուններում, պատուհանի և դռների բացվածքներում օգտագործել են հատուկ ձևի (կդմինդրը հիշեցնող) աղյուսներ և սրբատաշ քարեր։ Շինարարական այս տեխնիկան բնորոշ է 2—3-րդ դարերի համար։

Պալատական կոմպլեքսի մեջ էր մտնում նաև մոզայիկ հատակով բաղնիքը, որի ավերակները բացվել են 1953—1954 թ. թ.։ Բաղնիքը բաղկացած

[12] Ճարտ. Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնիի ամրոցում, Երևան, 1953.։

է չորս բաժանմունքից, որոնք դասավորված են միևնույն առանցքի վրա։ Հարավ արևմտյան ճակատում գտնվել է հնոցի բացվածքը, որին կից սենյակում պահպանվել է սառը ջրի ավազանի հատակը։ Նույն սենյակի մի մասը, որը կիսաշրջանակաձև խորան ունի և նրան կից հաջորդ երկու բաժանմունքները ծառայել են իբրև հանգստարան-հանդերձարան և կիսաշրջանակաձև խորանում ունեցել է սառը ջրի փոքրիկ ավազան՝ լողանալու համար։ Բաղնիքի կառուցումից փոքր ինչ անց նրան կցել են մի առանձին հանդերձարան, որը արդեն միևնույն առանցքի վրա չի տեղադրված (նկ. 3)։



Նկ. 3. Գառնիում բացված բաղնիքի հատակագիծը (III-դ)

Բաղնիքը ունեցել է կրկնակի հատակ. ստորին հատակը լցված է կրաշաղախով, որի վրա կանգնեցված են հենակներ, կլոր աղյուսներից, որոնց վրա հենվում է վերին հատակը։ Ծուխը և տաքը հնոցից մտնելով վերին հատակի տակ, տաքացնում էին բաղնիքը։ Բաղնիքը նույնպես կառուցված է ճեղքված, կարևոր մասերում սրբատաշ քարերով և կղմինդրաձև աղյուսներով՝ կրաշաղախի օգնությամբ։

Բաղնիքի հանդերձարանի հատակը խճանկար է՝ կազմված 15 երանգի մանրիկ քարերից (1 քառ. մետրի մեջ մոտ 35—40 հազար քար)։ Ծովի կանաչավուն ֆոնի վրա պատկերված են՝ կենտրոնում քառանկյունի դունագեղ շրջանակի մեջ Օվկիանոսը՝ եղջյուրավոր մարդու և Ծովը (ΘΑΛΑϹϹΑ)՝ կնոջ կիսանդրու տեսքով։ Կենտրոնական այս առանցքի շուրջ պատկերված են առասպելական արարածներ՝ իխթիոկենտավրների տեսքով (գլուխը և իրանը մարդու, ձիան առջևի ոտքերով և ձկան տուտով), սրանց մեջքերին նստած են ծովային դուշակ ծերունի Ներևոսի դեղանի դստերները՝ Ներեիդները (նկ. 4.), պատկերված են նաև ձկներ, ձկնորսներ, աստվածներ, որոնց թվում սիրո աստված Էրոսը, սիրո համոզման և պերճախոսության աստվածուհի Պիթոն, ցանկությանն աստված Պոթոսը։ Կենարար ջուր, կյանքի առաջացում,

հարատևություն, սեր և վայելք՝ ահա Գառնիի խճանկարի բովանդակությունը։ Ուշադրավ է, որ 3-րդ դարի այս խճանկարի վրա հելլենիստական գծերը երևան են գալիս բավականաչափ ցայտուն կերպով, իսկ հռոմեական տարրեր նկատելի չեն։ Գառնիի խճանկարը ինչպես իր սյուժեով, նույնպես և արվեստով Հին Հայաստանի ուշ հելլենիստական մոնումենտալ գեղանկարչության հազվագյուտ և բացառիկ արժեքավոր հուշարձան է[13]։

Գառնիի պալատական դղյակային կոմպլեքսի մեջ մտնող շենքերը ներսում ունեցել են նաև ճարտարապետական հարդարանք՝ մարմարե արձաններ, խորշեր, ավազաններ։ Այդ են վկայում պեղումների ժամանակ հիշյալ շենքերում գտնված մարմարե արձանների և մինիատյուր չափսերի քիվերի բազմաթիվ բեկորները։

Գառնիի բնակելի պալատական շենքը և բաղնիքը իրար ժամանակակից են և իրենց առանձնահատկություններով, շինարարական տեխնիկայով, պեղումների ժամանակ գտնված իրերով և մոզայիկ հատակի օգնությամբ լավ թվագրում են 3-րդ դ. վերջով։

Քանդակագործություն.—Հին Հայաստանի քանդակագործության նմուշներից մեզ համարյա ոչինչ չի հասել, այնուամենայնիվ գրավոր աղբյուրների վկայությունները և որոշ նյութական մնացորդներ ցույց են տալիս, որ այս բնագավառում ևս ժողովրդական և հելլենիստական երկու ուղղությունները առկա են եղել։ Հին Հայաստանի հեթանոսական մեհյաններում դրվում էին աստվածների արձաններ-կուռքեր, որոնց մասին մենք ունենք գրավոր աղբյուրների բազմաթիվ վկայություններ։ Կուռքերը կերտվում էին քարից, փայտից, մետաղներից։ Այդ առթիվ վկայություններ պահպանել է Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը, Հովհան Մամիկոնյանը։ Արձանները կանգնեցված էին Արմավիրում՝ Արևի և Լուսնի[14] և այլն, բազմաթիվ արձաններ մյուս քաղաքներում, բերդերում, ավաններում։

Ի պատասխան Տրդատ Գ-ի հարկադրանքի հեթանոսական աստվածներին պաշտելու, քրիստոնեությունը ծածուկ պաշտող Գրիգորը պատասխանում է՝ «Վասն զիցն թէ ասես, զոր կոչես դու աստուածս՝ ստոյգ իսկ են հաստուածք. վասն զի հաստեալք են ի մարդկանէ և եղեալք պատկերք ի ձեռաց ճարտարի. ոմն փայտեալք են և ոմն քարեալք. ոմն են պղնձիք և ոմն են արծաթիք, և ոմն ոսկիք...»[15]։ Ապա Գրիգորը հորդորում է Տրդատին հրաժարվել կռապաշտությունից «... ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունդ, զքարեղէն և զփայտեղէն, զարծաթեղէն և զոսկեղէն պղնձաձոյլ պատկերացդ, զի սուտ են և սնոտի»[16]։

Քրիստոնեություն ընդունելուց հետո «Գրիգոր Թագաւորաւն հանդերձ» փշրում ոչնչացնում են Անահիտի և Տիրի արձանները Արտաշատում[17], Անահիտի մյուս արձանը՝ Երեզ ավանում[18], Զևսի կամ Արամազդի արձանը՝ Անի ամրոցում[19] (Եփրատի ափին), Միհրի արձանը՝ Բագահարիճում[20], Բարշամի-

[13] Б. Н. Аракелян, Мозаика из Гарни, ВДИ, № 1, 1956.

[14] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 117։

[15] Ագանթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909 էջ 40։

[16] Նույն տեղում, էջ 121։

[17] Նույն տեղում, էջ 404։

[18] Նույն տեղում, էջ 409—410։

[19] Նույն տեղում, էջ 409։

[20] Նույն տեղում, էջ 411—412։

նայի արձանը՝ Դարանաղյաց գավառի Թորդան գժուղում»[21], Նանեի արձանը՝ Թիլ ավանում[22], Վահեվահյան Վահագնի, Ոսկեհատ Ոսկեմոր (Անահիտի) և Աստղիկի բագինները (արձանները) Տարոնի Աշտիշատ կոչվող սրբավայրում[23], Ամանոր և Վանատուր Աստվածների արձանները Բագավանում[24], Գիսանէի և Դեմետրի արձանները Տարոնում[25]։

Ամփոփելով իր խոսքը հեթանոսական մեհյանների և նրանց մեջ դրված բագինների (կուռքերի կամ արձանների) մասին, Ագաթանգեղոսը գրում է. «Եւ այսպէս ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն անմտունչս, զձուլեալսն, կռեալսն, կոփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօգուտսն, վնասակարսն, արարեալսն անմտութեամբ ցնորելոց մարդկան, դարձեալ սրտի մտօք ի հաւատսն հաստատեալք»[26]։

Ուրեմն արձաններ շատ կային, որոնք պատրաստված էին քարից, փայտից, մետաղներից, դրանք ձուլածո էին, կռածո, քանդակված։ Անահիտի արձանը Աշտիշատում և Երեզ ավանում ձույլ ոսկուց էր պատրաստված։ Վերջինիս մասին պատմահայրը վկայում է. «Գրիգոր թագաւորաւն հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն[27]։

Այս արձանների մեծ մասը տեղում էր պատրաստված։ Խորենացու ասելով Վաղարշակ թագավորը «Մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն[28]»։ Ուրեմն բացի աստվածների արձաններից եղել են թագավորների և նրանց նախնիների արձանները։ Դրանց մասին մենք թերևս կարող ենք գաղափար կազմել Դվինի մոտ գտնված մի տուֆակերտ արքայական գլխի օգնությամբ, համադրելով այն հարևան Կոմագենում՝ Նեմրութ-դաղում գտնված արձանների հետ[29]։ Տեղական արձանների թվին պետք է վերագրել նաև Դեմետրեի և Գիսանեի արձանները, որոնք ձուլված էին բրոնզից։ Դրանցից առաջինը «հնգետասան կանգուն էր» (7,5 մետրից ավելի), իսկ երկրորդը նույնպես «պղնձի էր, երկոտասան կանգուն երկայնութեամբ և երկու կանգուն և թզաւ լայնութիւն[30]։ Դվինում և նրա մերձակայքում գտնվել են տուֆ քարից կերտված տեղական ոչ բարձրարվեստ արձանների գլուխներ, քոլոգի նմանվող հարթ գլխարկներով, իսկ մի փոքր չափի գլուխ գլխարկ չունի և բոլորովին անմազ է։

Հայաստանում եղել են և զգալի թվով հելլենիստական բնույթի արձաններ։ Դրան մեծապես նպաստեց հայկական պանթեոնի համադրությունը հունականի հետ, որը թույլ էր տալիս դրսից՝ հունա-հելլենիստական աշխարհից բերել արձաններ և զետեղել հայկական մեհյաններում։ Այդ առթիվ ուղղակի վկայություններ է պահպանել Մովսես Խորենացին, որը, հիշատակում է նաև՝ երկու հույն քանդակագործների անունները։ Խոսելով Արտաշեսի «լիւդացւոց» երկիրը արշավելու մասին, Խորենացին գրում է.

---

[21] Նույն տեղում, էջ 408։
[22] Նույն տեղում, էջ 410։
[23] Նույն տեղում, էջ 421—422։
[24] Նույն տեղում, էջ 435։
[25] Հովհան Մամիկոնյան Պատմութիւն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 97—98։
[26] Ագաթանգեղայ, Պատմութիւն. էջ 410։
[27] Նույն տեղում, էջ 409—410։
[28] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն. էջ 117։
[29] Г. Тирацян, страна Комагена и Армения, «Տեղեկագիր», № 3—1956 թ.։
[30] Հովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 97—98։

«Եւ գտեալ յԱսիայ պղնձածոյլ ոսկեզոծ պատկերս գԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր։ Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպողոնին և գԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր, իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Ակիւղեայ և ի Դիպինոսէ կրետացւոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական դիւղն յԱշտիշատ. յետ մահուանն Արտաշիսի»[31]։

Փոքր Ասիայից բացի, արձաններ բերվել են նաև Հունաստանից, «Բայց և յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զքօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զհետ լինելով. դադարեն առ նոսա»[32]։

Ուշագրավ է Խորենացու պատմածը նաև Տիգրան Բ-ի մասին։ Տիգրանը կամենում է մեհյաններ շինել և իր մոտ եկած հույն քուրմերի խորհուրդով կանգնեցնում է արձաններ Հայաստանի արևմտյան մասում՝ «գՈղիմպիական պատկերն Դիոսի [Ոլիմպյան Զևսի պատկերը] յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիլ, և զԱրտեմիդայ զմիւս պատկերն-յԵրիզայ, և զԵփեստուն ի Բագայարինջ։ Բայց զԱփրոդիտեայ զպատկերն իբրև Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից սեղիսն»[33]։

Տիգրանը մեհյաններ է կառուցել տալիս, նրանց առջև արձաններ է կանգնեցվում և պարտավորեցնում է ամենքին երկրպագել։ Այնուհետև «Ինքն իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ գԲարշամինայ զպատկերն, զոր ի փղոսկրէ և ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդն»[34]։

Դրսից բերված այս արձանները հելլենիստական արձանագործության միակ խումբը չէին Հայաստանում։ Պետք է ենթադրել, որ նրանց նմանությամբ արձաններ կերտվում էին և տեղում։ Այս հելլենիստական ուղղությանը պատկանող արձաններից որոշ մասնագետներ հայտնաբերվել են։ Հայտնի է այսպես կոչվող Անահիտի բրոնզի արձանի գլուխը (նկ. 5), որը գտնվել է Արևմտյան Հայաստանում և պահվում է Բրիտանական թանգարանում։ Բարձը Հայքում գտնվել է մի մարմարե արձանի ձեռքի թաթը, Դառնիում գտնվել են մարմարե արձանների և բարելիֆների բեկորներ։ Դրանցից մեկը մարմարե արձանի ծնկի ցածի մասն է, և նրա չափերից երևում է, որ արձանը ունեցել է 1,40—1,50 մ բարձրություն։ Հետագա պեղումները Հին Հայաստանի նշանավոր կենտրոններում, անշուշտ, երևան կբերեն նաև արձանագործության նոր նյութեր։ Հին Վաղարշապատի Դառնիի պեղումների ընթացքում գտնվել են նաև տերակոտային (կավե թրծած) արձանիկներ[35], որոնք նորույթ լինելով Հայաստանում, միաժամանակ բնորոշ են հելլենիստական մշակութային ուղղության համար։

Դառնիի պեղումների շնորհիվ երևան են բերվել զգալի քանակությամբ նյութեր, որոնք բնութագրական են նյութական մշակույթի մի շարք բնագավառների համար։

[31] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 122։
[32] Նույն տեղում, էջ 123։
[33] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 127—128։
[34] Նույն տեղում, էջ 128։
[35] Б. Н. Аракелян, Гарни I, стр. 41.

Նկ. 1. Դառնիի III-դ բազնիքի խճանկար հատակի մի հատված

Նկ. 5. Անանիա գիցուհուն վերագրվող բրոնզե արձանի գլուխը
(Բրիտանական թանգարան)



Նկ. 6. Կավե անոթներ Լ դար (Ֆառնի)

Բազմազան է խեցեղենը, ինչպես իր կիրառական նշանակությամբ, նույնպես և ձևերով ու պատրաստման տեխնիկական եղանակներով: Խեցեղեն անոթներից շատերը, մանավանդ խոհանոցային անոթները իրենց ձևերով և մշակման առանձնահատկություններով (անգոբով պատելը, փայլեցնելը և այլն) կրկնում են տեղական հին օրինակները: Շատ անոթներ պահպանում են մշակման տեղական առանձնահատկությունները, սակայն իրենց ձևերով և պսակների ու կանթերի մշակումով ցուցաբերում են մեծ ընդհանրություն Ասորիքի, հելլենիստական կենտրոնների, օրինակ Դուրա-Եվրոպոսի խեցեղենի հետ[36]: Գտնվել են խեցեղենի և այնպիսի նմուշներ, որոնք բնորոշ են հին աշխարհի համար և Հայաստանում երևան են եկել հարևան հելլենիստական երկրների մշակույթի ազդեցությամբ: Դրանց թվին են պատկանում ապակյա սրվակների նմանվող, բայց կավից պատրաստված անոթները (նկ. 6), օղակաձև հենակ ունեցող բլորակ ցածրագիր ափսեները՝ նման terra sigillata կոչվող ափսեների[37], բայց առանց լաքի և վարպետի նշանի, նկարազարդ մի կարաս, որը ուշ հելլենիստական գունազարդ խեցեղենի ուշագրավ նմուշ է:

Հայաստանի մի շարք վայրերի առաջին դարերի դամբարաններում, մանավանդ Վաղարշապատում, Գառնիում և Աշնակում հայտնաբերվել են դգալի քանակությամբ ապակյա անոթներ (նկ. 7): Դրանք պատրաստվել են

Նկ. 7. Ապակյա սրվակներ (Գառնի)

երկու եղանակով՝ փչումով առանց կաղապարի և կաղապարի մեջ: Հայաստանում հայտնաբերված անտիկ ժամանակաշրջանի ապակեղենը իր ձևերով, մշակումով, գույներով բավականաչափ բազմազան է: Կան երկար վզով և ձվաձև ցածի մասով (կոլրայաձև) անոթների, գնդաձև միականթ և երկկանթ, հարթ մակերեսով և կանիլյուրներով զարդարված, ամֆորային ձևի, գլանաձև և այլ ձևի անոթների մի քանի տարբերակներ:

Կաղապարների մեջ պատրաստված անոթները ունենում են ուլնֆ երկրաչափական և այլ բնույթի զարդեր, իսկ մի դեպքում անոթի հանդիպակաց կողքերին կանացի գլուխ է պատկերված: Մի մանուշակագույն վնցանիստ անոթի վրա շրջված վիճակում տպված է ΓΕΡΜΑΝΟϹ: Փչելու եղանակով պատրաստված ապակյա նուրբ անոթների վրա հանդիպում են ուլնֆ և ներճկված կամ այլ գույնի ապակուց վերադիր զարդեր:

---

[36] The Excavations at Dura-Europos, Preliminary report of the ninth season of works 1935—1936, part II, New-Haven, 1946, pl. XXXVI.

[37] Г. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении, «Տեղեկագիր» № 2, 1957, էջ 87:

Վերջապես գտնվել են նաև փորագրված և պտտվող անիվի վրա հղկված (шлифованные) անոթների նմուշներ։

Հայաստանում հայտնաբերված 1—3-րդ դ. դ. ապակեղենը բազմազան է նաև իր գույներով ու երանգներով. բոլորովին անգույն թափանցիկ ապակեղենի կողքին կան մանուշակագույն, կորալտի կապույտ գույնի, երկնագույն, բաց երկնագույն—կանաչավուն, դեղին նարնջագույն, բաց դեղնավուն, կանաչավուն, մուգ շագանակագույն ապակյա անոթներ։

Հայաստանում հայտնաբերված ապակեղենի զգալի մասը ներմուծված է Սիդոնից և Ասորիքի ապակեգործության այլ կենտրոններից, բայց կան և ապակեղենի այնպիսի նմուշներ, որոնք տեղական են։ Վերջիններիս թվին կարող են վերագրվել երկարավիզ՝ ներքևում ձվաձև անոթները, գնդաձև, բաց երկնագույն և կանիլյուրավոր մի կանթանի անոթները, որոնք ունեն շեղանկյունաձև պատկերներով զարդագոտի։

Տեղական ապակեղենի նմուշներին թերևս պետք է վերագրել հաստ ապակուց պատրաստված և պտտվող անիվի օգնությամբ հղկելու միջոցով բլթակավոր և ձվածիր պատկերների շարք կազմող գոտիներով զարդարված մեծ անոթը։ Հայաստանում գտնված հղկված ապակին ավելի մոտիկ զուգահեռներ ունի Կովկասում (Օսեթիա, Ադրբեջան)։

Գառնիի Վաղարշապատի դամբարաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ զարդեր՝ մետաղե ականջօղեր, մատանիներ, կախիչներ, հայելիներ, քարից և ապակուց պատրաստված ճարմանդներ, ոսկրե վարսակալ քորոցներ և այլ իրեր՝ հուլունքներ՝ պատրաստված քարերից, ապակուց, սաթից, եգիպտական երկնագույն պաստայից և այլ նյութերից (նկ. 8)։

Զարդաքանդակների թվում ևս կան ներմուծված և տեղական առարկաներ, որոնք նույնպես բաժանվում են երկու խմբի՝ ավանդական տեղական ձևերի զարդեր և հելլենիստական տեսք ունեցող զարդեր, երբեմն էլ այդ երկու ձևերը երևան են գալիս զուգորդված ձևով։ Կարևոր է նշել, որ հելլենիստական բնույթի առարկաներ հայտնաբերվում են քաղաքների և ավանների ոչ հարուստ բնակիչների դամբարաններում, հետևաբար նրանք մուտք էին գործել այդ բնակչության կենցաղի մեջ։

Վերջին տարիների պեղումների ընթացքում Վրաստանում (Սամթավրո, Մցխեթա-Արմազի, Բագինեթի, Ուրբնիսի և այլուր) և Ադրբեջանում (Մինգեչաուր, կարասային և կատակոմբային թաղումներ գանազան վայրերում, մանավանդ Կուրի և Արաքսի ստորին հոսանքների միջև ընկնող հովտում) երևան են եկել վերևում նկարագրված նյութերին համանման բազմաթիվ նյութեր, որոնք կարևոր են Անդրկովկասի հին մշակույթը բնութագրելու տեսակետից։

Հին Հայաստանի նյութական մշակույթի, մասնավորապես Գառնիի պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. Հին Հայաստանի նյութական արտադրությունը, տնտեսական և հասարակական քաղաքական կյանքը 1—3-րդ հասել էր բավականաչափ բարձր մակարդակի, որով և պայմանավորված էր այն ժամանակաշրջանի մշակույթի մակարդակը։ Այդ մշակույթը, սկսած 3-րդ. դ. մ. թ. ա. կորցնում է ոչ միայն նախնադարյան համայնական հասարակության, այլև հին Արևելյան մշա-

կուլթներին բնորոշ գծերը և նկատելիորեն ստանում է հելլենիստական կերպարանք։

2. Հելլենիստական կոչվող աշխարհի շրջանակներն ավելի լայն էին, քան սովորաբար պատկերացվում է, այդ շրջանակների մեջ մտնում էին նաև Հայաստանը և իր հարևան երկրները, որոնք այս կամ այն չափով դարձել էին հելլենիստական կուլտուրայի օջախները։



Նկ. 8 ա



Նկ. 8բ. Զարդեր, հին ավանդական ձևի և հելլենիստական բնույթի (Դառնի)

3. Հին Հայաստանի մշակույթի մեջ որոշակիորեն նկատվում է երկու ուղղություն՝ ժողովրդական ուղղությունը՝ իր հնամենի, ավանդական տեղական և հին արևելյան արմատներով և հելլենիստականը, որ իշխող ստրկատիրական ավագանու և քաղաքային աղատ բնակչության մշակույթն էր.

4. Մշակութային այս երկու ուղղությունները պատնեշված չէին մեկը մյուսից, նրանց միջև գոյություն ուներ փոխադարձ կապ և փոխադարձ ներթափանցում. դրա շնորհիվ Հայաստանի մշակույթը ձեռք էր բերում իրեն բնորոշ ինքնահատուկ գծեր։ Հայաստանի հելլենիստական մշակույթի հուշարձանները ավելի մոտիկ են Միջագետքի և Ասորիքի հելլենիստական կուլտուրայի հուշարձաններին։

5. Հելլենիստական մշակույթը ուներ շատ ընդհանուր գծեր, սակայն նրա զարգացման մակարդակը տարբեր երկրներում միևնույնը չէր, բացի այդ, նրա դրսևորումները տարբեր երկրների կոնկրետ պատմա-կուլտուրական պայ-

մաններում զուրկ չէին յուրահատուկ և ինքնատիպ գծերից։ Վերջիններիս ուսումնասիրությունը հին աշխարհի հնագիտության և արվեստի մասնագետների առաջ ծառացած կարևորագույն խնդիրներից մեկն է։

6. Հելլենիստական մշակույթը Արևելքում առավել կենսունակ գտնվեց և հարատևեց նաև 1—3-րդ դ. դ., նկատելիորեն հարստանալով հռոմեական մշակույթի ազդեցությամբ, սակայն պահպանեց իր հիմնական գծերը և չդադարեց հելլենիստական լինելուց։

Б. Н. Аракелян

## Основные черты материальной культуры древней Армении

### Резюме

На основании изучения дошедших до нас письменных сведений и памятников материальной культуры, обнаруженных при раскопках старого Вагаршапата и Гарни, автор приходит к следующим выводам:

1. В I—III вв. до н. э. экономическая, общественно—политическая жизнь и материальная культура Армении достигли значительно высокого уровня. Эта культура уже потеряла черты, свойственные как культуре первобытно-общинного, так и культуре древневосточного общества и заметно приобрела эллинистические черты.

2. Круг эллинистического мира был значительно шире, чем обычно представляется; в него входили также Армения и соседние с ней страны, ставшие в той или иной мере очагами эллинистической культуры.

3. В культуре древней Армении ясно прослеживаются два направления: народное направление со своими местными и древневосточными корнями и эллинистическое, являвшееся культурой господствующей рабовладельческой знати и свободнгго городского населения.

4. В результате взаимодействия и взаимопроникновения этих двух направлений культура древней Армении приобрела своеобразные и самобытные черты.

5. Эллинистической культуре вообще свойственны многие общие черты, но в разных странах она достигла различного уровня развития и приобрела самобытные черты, изучение которых является одной из важнейших задач историков культуры античного мира.

6. Эллинистическая культура на Востоке проявила большую жизненность и продолжала развиваться до III в. н. э.; обогатившись под влиянием римской культуры, она не потеряла, однако, своего элинистического облика.

B. N. Arakelian

## Basic Features of Ancient Armenia's Material Culture


### Summary

On the grounds of written information's study as well as that of the material culture's monuments disclosed at the excavations in old Vagharshapat and Garny, the author comes to the following conclusions:

1. In I—III cc. B. C. the economic, social-political life and material culture of Armenia reached high level. This culture had already lost the features peculiar both to the culture of primitive communal system and that of ancient oriental society and noticeably Hellenistic features.

2. The sphere of Hellenistic world was considerably broader than it is usually conceived; Armenia and the neighbouring countries, that had become more or less the breeding ground of Hellenistic culture, were members of it too.

3. One may clearly trace back two trends of the culture of ancient Armenia: the national trend with its local and ancient oriental roots and the Hellenistic one, which was the culture of the ruling slave-holding aristocracy and free urban population.

4. As a result of reciprocal action and mutual penetration of these two trends of ancient Armenia's culture acquired original and distinctive features.

5. Many common features are generally peculiar to the Hellenistic culture, but in different countries it reached different levels of development and acquired distinctive features the study of which is one of the most important tasks of antiquity's culture historians.

6. The Hellenistic culture in the East displayed great vitality and continued development up to the III c. A. D.; having enriched oneself under the influence of Roman culture they have not lost their Hellenistic manner however.